




ԱՂԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԾԱՌԱԹԱԹԵՐԹ

Հրատարակում է ամեն չորեքշաբթի օրերը

Տարեկան գինն է Թեֆլիսում 12 դր. վնասման 6 դ. Պարսկաստանի օտար քաղաքները 15 դ. վնասման 8 դ. Ռուսաստան 3 րուբլի. վնասման 2 րուբլի. Օտար երկիրները 8 ֆրանկ. վնասման 5 ֆրանկ: Հասցե՝ Teheran Réduction ASTGH-AREVELIAN

«ԱՍՏՂ-ԱՐԵՎԵԼԻԱՆ» խմբագրությունը բաց է ամեն օր բացի կիսակի եւ տոն օրերն:

Յայտարարություն ընդունվում է ամեն լեզվով. իւրաքանչիւր բառին 1 շահի:

Մ Ա Ն Ա Գ Ո Յ Ժ

Ամսոյս 19-ին առաւօտեան ժամը ճիշդ 12-ին Ծանգաւտե-Արդիւ-Ազիւ ուխտատեղում, որ քաղաքից 1 մղոն միայն հեռու է աղօթելու ժամանակ մի չարագործի գնդակով նահապետեց Պարսկաստանի Ահմադիան Կայսր Նարեկոյի Ծանր:

Երբին Վեհափառութիւն ամենայն հայոց ԿԱՌՈՒՂԻՅՈՒՄԸ հեռագրով հրամայած է հանգուցեալ բարեգութ ՉԱՅԻ համար տեղւոյ եկեղեցիների մէջ աղօթք մատուցանել:

Ուստի լուսաշիկայ կերակէ ապրիլ 28-ին Ս. ԳԵՈՐԳԻ եկեղեցւոյ մէջ առաւօտ ժամ 10 և կէս հանգիստուոր աղօթք պիտի մատուցւի, կը խնդրւի հայ հաւորակութիւնից սև զգեստով և հայ պաշտօնեաներից համագգեստով ներկայ գտնւի:

Առաջ. Տեղ. Պարսկաստանի և Փոթ. թեմի Թեֆլիսայ.

Ս. Ծ. Վր. Ալփաետան.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Մի անփութաբերելի կորուստ.

Հայկական հարց. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Այստեղ էլ բռնութիւն. Նամակներ խմբագրութեան. Ներքին լուրեր. ՀԵՌԱՊԻՐՆԵՐ. Յայտարարութիւն. ՆԵՐ. ԲԱՆԱՍԻՐԱՅԱՆ Պարսկաստանը Վեհ. Նարեկ-դէն Զահի թագաւորութեան օրով:

Էր Պարսից միտնեծան գահի վրայ եւ նրա որդին Զահի Մուհամմէտ Շահը դաւրեժում թագաժառանգ էր, երբ նոյն քաղաքում հէճրի թակաւին 1247 տարու, 1) Սաֆար ամսի 6-ին, կիրակի օրը, 4 և մէկ քառորդ ժամ զիշերից անցած ծնաւ Նարեկտոյին Շահը:

Երբ ու կէս տարեկան էր, երբ իր պապը, Փաթալի Շահը մեռաւ եւ հայրն Մուհամմէտ Շահը գահը բազմելով ինքը Դաւրեժում գահաժառանգ ընտրւեցաւ անամը միայն մինչեւ 16 տարեկան լինելը: Այն հասակից արդէն ձեռնամուխ եղաւ վարչական գործերին եւ սկզբից արդէն ցոյց տաւ իր ընդունակութիւնը, մի տարի ամբողջ Ատրպատականի նահանգը խաղաղութեամբ կառավարելով:

1) Որ համապատասխանում է Քրիստոսի 1830 թ.ականին.

ՄԻ ԱՆՓՈՒՄԻՆԵԼԻ ԿՈՐՈՒՄՏ

Որքան էլ ցանկանաս բաղդի, ճակատագրի խաղերին հաւատացող անապաշտ չը լինել, բայց դէ ինչ անես, որ երբեմն քեզ գտնուի ես այնպիսի հանգամանքների առաջ, որոնք ստիպում են գէթ առ ժամանակ մի փոխել համոզումդ:

Դեռ մի շաբաթ առաջ, ամբողջ Պարսկաստանը արտակարգ լուգման մէջ պատրաստութիւններ էր տեսնում, տօնելու իւր սիրեցեալ Վեհապետի 50 ամեայ գահակալութեան տարեգարձը, որի նմաններին դժբաղդաբար Պարսկաստանի գահը շատ քիչ անգամներ է առիթ ունեցել հիւրասիրելու, բայց այսօր, այդ որբացած ժողովուրդը նրա մահացած գիակի առաջ ծնրադրած իւր Մեծ կորուստն է ողբում:

Այն, զարեբի հրաշալի ծնունդներից մինը բազում ողբացեալ Նարեկդէն Զահը չը կայ այլևս. նա զոհ գնաց մի չարագործի ռեվոլվրի գնդակին ամսոյս 19-ին ուրբաթ օր, առաւօտեան ժամը 12-ին Զահագէ-Աբգիւ-Ազիւ ուխտատեղում. աղօթելու ժամանակ, սուգի մէջ թողնելով ամբողջ Պարսկաստանը:

տատեղում. աղօթելու ժամանակ, սուգի մէջ թողնելով ամբողջ Պարսկաստանը:

Ընդհանուր լուսաւորութիւնը կարգից Արեւելում իւր Մեծ ներկայացուցիչը, Պարսկաստանը՝ իւր Մեծ լեզափոխիչը, Պարսից Տէրութիւնը՝ իւր վերածնիչը, սակայն դրանք բոլորը գուցէ գտնեն մի այլ փոխանորդ և մխիթարւեն, միայն հայութեան կորուստն է անփոխարինելի, միայն նա է, ու պիտի մնայ անմխիթար, որովհետեւ դրանով կորցնում է մի բարեկամի, այն, մի անկեղծ բարեկամի, որ իւր հովանաւոր շուքի տակ առնելով մի չարաւած ժողովրդի, կատարելապէս հակացել էր նրա վիճակի ծանրութիւնը, ուստի ամեն միջոցներով ցանկանում էր մոռացնել տալ նրան բնութեան հասցած դառնութիւնները:

Ամբողջ Վեհապետական ժողովի մէջ (չինքն քրիստոնեայ, մահմետական թէ կապաշտ) մի հատիկ թագաւորն էր, որ տեղի տալով իւր զգացումներին, մի կողմ թողած քաղական հայեացքները, կարեկցարար որդեգրել էր այդ շախմատաւած ողբի աննշան բեկորներին և մի

խանաւոր դեկը ձեռք առնելով՝ նաւթէտալին Շահի առաջին գործը եղաւ իր հօր մահւան առթիւ յառաջացած խռովութիւնները հանդարտեցնելը:

Իր հօրեղբայրը Սալար, որ իրենից աստատման էր՝ կամենալով ինքը թագաւորել, 1266-ին բռնեցաւ և ընտանեօք միասին բնաջինջ եղաւ:

Ապա փոքրիկ ապստամբութիւններ ծագեցան թագաւորութեան զանազան նահանգներում, որոնք միշտ առանց մեծ հետեւանք ունենալու խեղդւեցան:

Նարեկտոյին Շահի թագաւորութեան առաջին տարիներում յայտնեցան բարի կուշած մի կարգ աղանդաւորներ, որոնք կրօնական նոր սկզբունքների եւ օրէնքների էին հետեւում եւ Միքաէլ Ալի Մուհամմէտը (բաբը) ընդունում էին իրենւ վերջին Մարգարէ: Բաբիների դաւանած կրօնական սկզբունքներն հակառակ լինելով մահմեդ-

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՊԱՐՏԱՅԱՏԱՆԸ ՎԵՋ. ՆԱՍՐԱԴԻՆ ՇԱՅԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՕՐՈՎ

Վերջին դարի Արեւելեան նշանաւոր թագաւորներից մինը լինելով հանդիմանալով Վեհափառ Նաւապտալին Շահի խանաւանդ այն արտակարգ հայրական խնամքը եւ հոգացողութիւնը, որ կէս դար հայ ազգը վայելել է անմահ Մարգարէից, մեզ, հայերիս վրայ պարտք է դնում աւելի մօտից ծանօթանալ այդ Մեծ Վեհապետի կեանքի միջանկրծերի հետ: Ուստի մեր աշխատակիցներից մէկը վստահելի աղբիւրների լինելով պատրաստել է հետեւեալ աշխատութիւնը:

Խմբ.

Փառմաւի Շահը ունի թագաւորութ

1) Քրիստոսի 1847 թ.ին.

տեսակ հայրական գործարարական ցանկա- նութեամբ էր սրբել նրա արտաստանքը և վըշ- տանում էր նրա տառապանքը նկատելով, որ երբեմն ըստինքեան հասկանալի թէ պարսկահայը ինչ է կարցնում և թէ ինչու միթիւրեւ կարող չէ:

Մարգկութիւնը այսպիսի գիւտական րոպէներում մի ելք չէ կարողանում գտնել, եթէ ոչ իրեն կատարելապէս լանջնելով նախախնամութեան գոչում է «կամք անառն օրհնեալ եղիցի»:

Մենք միայն իրաւունք սենք ա- ղօթելու, որ նրա Վեհափառ ժառանգ Սուգաֆրէգդին Յահն ևս հետեւող լինի այն լուսաւոր շաւղին, որ գծեց իւր հոգեւոյ Վեհափառ Ծնողը:

Գիտաւոր հայր, հանգիստ ոսկրներով, խաղաղութիւն հոգեւոր, իսկ որբացած պարսկահային ոյժ և կարողութիւն տանելու այդ սոսկալի հարւածը:

ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՐՑ

Daily News-ի թղթակիցը Յունի. 1-ի Քիւթէքի կոտորածի մասին վստահելի աղբիւրներից հաւաքելով հետեւեալ ման- րամանութիւնները, որոնք վերջին կա- պոյտ գրկուքի մէջ չտեսնեցան, և որ Լորդ Սոլիքիւրի կարենտից գուրս գտնուողների՝ այսինքն այս թշուառ և դժբաղտ ժողովրդի բաղձով և դրու- թեամբ զբաղողներին համար, բաւական հետաքրքիր և շահաւէտ կարող է լի- նել:

Քիւթէքի մոտաւորապէս 200 տուն կամ հազար հոգի բնակող բնակիչ ունէր, շրջապատւած 9,000 թիւրք զրապիներով: Ուրֆայի 1895 հոկտ. 27 կոտորածից յետոյ, կառավարութիւնը գիմնջ հայերին յայտնելով, թէ թիւրք ժողովուրդը իրենցից վախենում է, հե- տեւաբար նոքա (հայերը) կառավարու- թեանը պիտի լանջեն իրենց բոլոր:

տակաւորութեան՝ այդտեղից խիստ ա- տելութիւն ծագեցաւ երկու կողմից էլ: Բաղիններն քանի անգամներ փորձեցին ապստամբել և իշխող կառավարու- թիւնը տապալելու համար մինչեւ ան- զամ տորժանակով փորձեցին սպան- նել թագաւորին, բաց ամեն անգամ անկաջող եղան իրենց ջանքերը և ընդ- հանուր և վերջնական մի կոտորած էլ կրելով պարտաւորեցան հրաժարել իրենց ունայն յոյսերից:

Պարսկաստանի հիւսիսային արեւել- եան կողմերը, Թիւրքմէնների հետ մի քանի ընդհարումներ տեղի ունե- ցան Սաքսիների շրջակայքում, որոնք գրեթէ միշտ առանց հետեւանքի ան- ցան թիւրքմէնների համար:

Թագաւորի հօրնորայրը Սալար խո- րասանում յաղթելուց և գլխատելուց յետոյ, պարսից զօրքը անցաւ Աֆղա- նիստանի սահմանից և Հէրաթի վրայ յարձակեցաւ, քանի որ Աֆղաններն Սալարին դաշնակից էին և օգնել է- ին նրան Նասրէտօին Շահի դէմ: Հե- րաթը խիստ պաշարմամբ անուցաւ և Շահաւէ Մօհամմէտ Ծուսուֆ Աֆ- ղանն ընկնելով Թէհրան քերեցաւ:

Նասրէտօին Շահի այս յիսմամբայ թագաւորութեան քաղաքական նշանա- տը դէպքերից մէկն էր Պարսից և Անգղիացոց պատերազմը կարելի է համարել:

Անգղիացու սրտին մօտեցիր, բայց

զէնքերը, այս յայտարարութիւնից յե- տոյ կառավարութիւնը ստանալով խեղճ հայերի զէնքերը, կատարեալ խուզար- կութիւն է կատարել տալիս վստահա- հանալու, թէ հայերը իսկապէս պաշտ- պանեւելու որեւէ միջոց չունեն: Այս գործողութիւնը, հայերի մէջ բաւական դժգոհութիւն ստեղծեց, մանաւանդ երբ տեսան, թէ թիւրքերը օրէցօր՝ ա- ւելացնում են իրենց զէնքերը, որով հայերը հարկադրեցին որեւէ վտանգից ազատ մնալու համար նոյնմբեր և զեկտ. ամիսներում իրենց տները ղուրս չգալ: Այս միջոցին կառավարութիւնը զօրք դուրս բերեց հայերը պաշտպանե- լու (կատարեալ ձեւակերպութիւն ան- պատճառ) համար, որոնց պէտքերը պիտի հոգարանպատճառ քրիստոնեայ ժողո- վուրդը, ամենայն մասամբ, այսինքն տալ բաւական ձի և զրատ, նոյն զօրքերի պիտոյքը փոխադրելու համար. տալ պահանջւած անկողին և կապերտ, հանգիստ քնելու համար եւ վերջապէս հոգիւն նոցա պահանջւած լաւ կերակուր և խորտիկները և այլն և այլն, այն- պէս որ այս արտակարգ և ծանր պա- հանջները, ինչձ հայերը անտպանելի աղբատութեան մասնեցին: Վերջապէս հասաւ վերջին օրը, այսինքն յունիս 1-ը ուր Ուրֆայի պահապան զօրքերի՝ հա- յերին կոտորելու լուրը հասնելով գըր- գոնց այստեղի զօրքերին էլ, որոնք մահացու մեղք համարելով իրենց եղ- բայրների օրինակին չհետեւել, սկսեցին իրենց արնաներկ ձեռնարկը... Գոտո- րածը և կողոպուտը սկսեց առաւօտեան ժամը 9-ին և վերջացաւ գիշերւան. զօրքն օգնութիւն էր գտնում քաղա- քի թիւրքերիցը, որոնց միտքն ինչ- պէս երեւում է, եղել է պարզ կողո- պուտ, բայց այդ անելուց յետոյ զօրքը սկսեց օրինաւոր կերպով կոտորել այն ամենին, որ չուզեցին մահապաշտու- թիւնը ընդունել. մահապաշտանքները համար գործ դրած միջոցները և չար-

Հնդկաստանին մի՛ մօտենալ: Պարս- կական դրօշը Հէրաթի քերդի վրայ ծածանելով՝ մտատանջութիւն սկսաւ պատճառել Լօնդօնի արքունիքին. Պար- սից առիւծը շատ մօտ էր Հնդկաստա- նի դռներին. նրան հետաքննելու համար շնչին մի պատճառով իրենց դեսպանը յետ կոչեցին թէհրանից և կարճ ժա- մանակից յետոյ յանկարծակի անգղիա կա՛ր գրահատորները երեւցան Պուշէոն շրջերում:

Պարսից զօրքը խորասանի եւ Աֆ- ղանիստանի կողմերը լինելով Անգղիա- ցիք շուտով գրանցեցին Պուշէոնը և սկսան յառաջանալ. մի քանի աննշան ընդհարումներից յետոյ՝ եւրոպական կառավարութեանց միջամտութեամբ այդ կողմը վերջացաւ եւ Փարիզում մի դաշնաւորութիւն կնքեցաւ երկու տէրու- թեանց մէջ, որով Անգղիացիք իրենց զօրքը քաշեցին Պուշէոնից և գրաւած տեղերը վերադարձրին Պարսից, իսկ պարսիկներն Պարտաւորեցան իրենց զօրքը հանել Հէրաթից և Աֆղանիս- տանի Անգղիացոց խնամակալութեանը յանձնել:

Քաղաքական ուրիշ դէպքեր չկան, բացի փոքրիկ և աննշան ապուտա- րութիւններ որոնք ամեն ժամանակ և ամեն երկրի մէջ կը պատահեն, քանի որ ամեն ժամանակ և ամեն երկրի մէջ էլ կ'գտնուին խառնակիչ և խռովարարներ, բայց այդ խռովու-

չարանքներն անտանելի էին. զորքի- նակ քարալի մէջ ապստամբ քսան հոգի կին, մարդ և տղայք դուրս քա- շելով մէկը միւսի յետեւից մարթեցին որովհետեւ չուզեցին ուրանալ իրենց հաւատը. ինչպէս նաեւ մի ծեր մարդ, որ մերժել էր մահապաշտանաւ և վիրածածկ գետին էր փռւած, կուրծքին բաւական քանակութեամբ կրակ դար- սելով Աստուածաշունչը պահում են աչքի առջև, ստիպում որ կարգայ այն տեղը, որ իրեն յայտ է տալիս երկնից թագաւորութեան համար եւալին. շա- տերին էլ, սարսափելի կերպով վերաու- րելուց յետոյ գցում են գետի մէջը. սպանած հայերի կանայք և աղկուհիք էլ, ինչպէս առարկաներ բեռնակիրների վրայ բառնալով փոխադրում էին թիւր- քերի տունը. զարմանալի եռանդով էր կատարում աղբիւրների յափշտակումը. շատ տեղեր էլ կուր էր ծագում (թիւր- քերի մէջ) նոցա բաժանելու պատճա- ճառով. բոլոր հայերի տները (բացի եր- կուսը) կողոպուտւած և թիւրքերը տիրա- ցել են. տեղիս հայերի կէս մասը կամ տասնը 96 հոգի սպանւել են, իսկ մնացեալն իրենց կեանքն ապաստելու հա- մար մահապաշտանութիւն ընդունեցին. հետեւաբար ամբողջ Քիւթէքի մէկ հոգի քրիստոնեայ չի մնացել. լուսաւոր չափաների եկեղեցին փախել է մեղ- կիթի, իսկ բոլորքականացը մէղքեւէի- զպրոց:

Մահմետականացած հայ կղերի հե- տաքրքիր նամակը

Daily News-ի թղթակիցը ստացել է հետեւեալ նամակը ուղղւած Ասիա- կան թիւրքերի աւերակ դարձած մի գաւառից, թւեալ 3 փետր. Արտա- սալի աչքերով կարգադրեց ձեր մի- թարար նամակը, որի դիմաց յայտնում ենք մեր շնորհակալութիւնը, բայց դժբաղտաբար այսօր ամենքս էլ մահմե-

թիւնք ոչինչ են քաղաքական հո- րիզօնի վրայ, եթէ ոչ փոքրիկ եւ նիհար ամպեր շինջ երկնից վրայ, ո- ռոնք շուտով կ'ջլին քամուց եւ կ'ան- յայտնան:

Վերստիւ Շահը անելի խաղաղաւէր լինելով իր ամբողջ ուշադրութիւնը դարձրեց երկրի բարոյական զարգաց- ման եւ ժողովրդի յառաջդիմութեան: Երկրի յոսատւորութեան մեծագույն նը- պաստեցին նրա արած ծանապարհոր- դութիւնները Եւրոպայում, ուր մեծ պա- տիւ եւ անկեղծ մի յարգանք գտաւ:

Այս ծանապարհորդութեանց գլխա- տը արդիւնքներից մէկն եղաւ նաեւ մեծ բազմութիւն եւրոպացոց՝ դէպ ի՛ պարսկաստան գաղթելը, որոնք իրենց հետ բերին Եւրոպական գիտութիւն, արհեստներն ու վաճառականութիւնը: Հետզհետէ պարսից և Եւրոպացոց յա- րաբերութիւնները սերտացան և բա- րեկամական դաշնադրութիւններ հաւ- տատեցան եւ Եւրոպական դիտական- տներ սկսան հաստատել թէհրանում եւ փոխադարձաբար պարսկական դես- պախտներն ու հիւպատոսարաններ Եւ- րոպայի գանազան քաղաքներում:

Նասրէտօին Շահը մասնաւոր մի ունէր ունեւ եւ կրթութեան հետ իր թագաւորութեան կրթող տարին (Հէժրի 1267 թականին) թէհրանում հաստատեցաւ կայսերական «Մատ- րասայը Նըզամիյը Տարոյ Փօնուն» գիւ-

տականացած ենք մեր կեանքը ազատե- լու համար, մինչև անգամ ես 70 տա- րեկան հասակումս քանի անգամներ մահաւան ձեռքից փախչելով և ազատ- ւելու ուրիշ միջոց չգտնելով, հակա- առակ իմ կամքիս (բայց առ երես) ընդունեցի հաւածողիս հաւատը, աղեր- սելով որ խնայեն ինձ և ծերութեանս պատճառով թող տան ինձ թլպատելու միտքը, սակայն անիրաւենքը չընդունե- ցին, ուստի ես էլ գլուխս ազատելու համար թալլ տուցի կատարել իրենց կամքը, որոնք ինձ թլպատելուց յետոյ կապառնային, թէ անասելի տանջանք- ներով կսպանեն եթէ նորէն ընդունեմ քրիստոնէութիւնը. ժողովրդին էլ նայն սպանալիքը կարգացին, որոնց մեծ մասը թլպատեցաւ և մի մասն էլ վի- րաւորւած և կիսամեռ ծակ ու ծուկում պահւեցան չեն համարձակուում դուրս գալ, վերջապէս այսքանս տեսն որ այստեղ էլ քրիստոնէութիւն չպիտի տեսնուի, եթէ օգնութիւն չհասնի խեղճ քրիստոնեաներին: Զենք գիտէր, արեւօք այստեղ ուղարկւած դրամը որ կարօ- տեալների համար է, քրիստոնեայ մնա- ցածների, թէ մահապաշտանացածնե- րի, եթէ առաջինների համար լինի այդ, ցաւում եմ որ նրանք չեն կարող աչքի (թիւրքերի) երեւալ և ոչ էլ քրիստոնեայ լինել խոստովանել, և հաւատացած եղէք որ Ս. Պատրիարքի ուղարկած դրամն էլ չպիտի կարողա- նան բաժանել. իսկ միւս կողմից էլ, հալածւողներն այս դառը վիճակում, ա- նօթի, մերկ, կոշտ գետնի վրայ ան- պաշտպան և ինեղ մեռնում են օրէց օր, որոնց ճակատագիրը միայն Աստուծոյ ձեռին է և որոնք երկնից օգնութեան են միայն աչք տնկել: Դէորդ և Աղամ բահանները չարաչար սպանեցին կրօ- նափոխ չլինելուն համար. Թ....քահա- նան էլ իմ նման թլպատելով ազատեց իւր կեանքը: Տէր... և Տէր Ք... Բահա-

տրական վարժարանը, ուր Եւրոպա- յից հրատարակած մասնագէտ դասա- տուներ եւ ուսանիչ սկսան դասախօ- սել և ուսմամբ, գիտութեամբ եւ զին- տրական կրթութեամբ կրթել սլար- սիկ նոր և մատաղ սերունդը: Այդ վարժարանի շրջանաւարտներից մի քանիսն ապա Եւրոպայ դրկեցան զա- նազան արհեստների ու գիտութեանց մէջ իրենց ունեցած ծիրքերը կատա- րելագործելու համար:

Պարսկական զօրաբանակն էլ մեծ փոփոխութիւն կրեց: Ամեն բանում Եւ- րոպացոց օրինակին հետեւելով եւ եւ- րոպացի մարզիչների ձեռքով կրթու- լով փոխեց իր հնադարեան ձեւը եւ արեւելեան կերպարանը:

Նասրէտօին Շահի օրով Պարսկաս- տանը քաւական ծաղկեցաւ. ամեն տեղ ծանապարհներ եւ խրճուղիներ շինեցան, քաղաքների պահպանու- թեան եւ հասարակաց անդրորութեան համար պահականոցներ եւ ոստիկա- նական կազմակերպեալ մի մարմին հաստատեցաւ, գետերի եւ գետակնե- րի վրայ կամուրջներ ծրկեցան, երկ- րագործութեան ամեն ինչ ու զարգանա- լուն դիւրութիւններ դրեցան և հե- տագրական յարեր, հեռախօսներ ու փոստային կանոնաւոր երթևեկութիւն- ներ հաստատեցան երկրի ամեն կող- մերը:

Կը շարունակուի



մարտնեղ պէտք է թէ ոչ բայց «Ջաւղի» խմբագրութիւնը իւր այդ տեղ տւած «տրամաբանութիւններով» աւելի ծաղրելի է դառնում: Նա այս տեղ էլ «տրամաբանում» է հէնց նոյն ձևով ինչ ձևով որ ամբաստանում էր: Օրինակի համար, այսպիսի մի «տրամաբանութիւն» տանք «Ջաւղի» իր խօսքերը. «Մենք հանգիստեաների թւի միջինումը միայն կ'վերցնենք 200 հոգի, և եթէ ամեն մէկը միջին հաշուով իր տոմսակի, բուֆետի վիճակախաղի համար ծախսած լինի 10 դրան միայն, էլի կունենանք 2000 դրան մուտք որից զուտ արգելւիք 1500 դրան և ինչու 598 դրան 14-շահի կէս»: Նախ և առաջ «Ջաւղի» խմբագրութիւնը գոնէ այս չափը պիտի հասկանար որ հաշիւը «եթէ» ներով չեն քննադատում, բայց «եթէ» ները այս յօդուածի մէջ նորութիւն չեն դրանք կազմումեն այս յօդուածի հիմքը և նորա ամենից մեծ փաստերը, երկրորդ մենք հարցնում ենք «Ջաւղի» խմբագրութիւնից որ ինչ տարբերութիւն կայ այս «տրամաբանութիւն» կոչւածի և դրանից առաջ գրած այն պարբերութեան մէջ որով դուք թէլի հաշիւն էիք քննադատում և որին վերջումը «ամբաստանութիւն» անունը տւիք: Պարտենք, եթէ ձեր «տրամաբանութիւնները» աւելի չեն ձեր «ամբաստանութիւններին» աւելի լաւ. չէ՞ր լինի որ այդ «ամբաստանութիւններով» բուսականիք և մարդկանց ժամանակը չիւլէիք այդ ծաղրալի «տրամաբանութիւններով». երրորդ, զուտ արգելւիքը եղել է մօտաւորապէս 730 դրան և ոչ թէ 598 դ. 14 կէս 2, եթէ Ջաւղի խմբագրութիւնը նայած լինէր նոյնպէս իրեն ուղարկւած ապառիկների ցուցակին, մեզ ազատած կլինէր մի քանի ասիւրի գրելու նեղութիւնից իրենց այս սխալն էլ ուղղելու համար:

Վերը լինում «տրամաբանութեանը» լաւորում է մի քանի զարմանալի և միևնույն ժամանակ ծիծաղելի հարցումներ: Օրինակի համար խմբագրութիւնը մեզանից հարցնում է թէ ո՞ւմ ենք ուղարկել տասը դրան տոմսակ ընծալ, զարմանալի հարց, այդ տոմսակներից մէկը ուղարկել է նոյն իսկ Ջաւղի խմբագրութեան և մէկն էլ մի հոգեւորականի: Երկրորդ զարմանալի հարցն այն է, որ խմբագրութիւնը մեզանից է հարցնում նախ արք եպիսկոպոսի ընթերցարանին ներած թէլի պարագաների ինչ լինելը: Այդ ինչով է մեզ վերաբերում, պարտենք:

Այս երկար քննադատութիւնը իւր օրինակելի «տրամաբանութիւններ» հետ միասին «բացատրութիւններ» անունի տակ մեր կողմից մէջ «մեկուկց լետուր» Ջաւղի խմբագրութիւնը որպէս թէ ուղում է տալ մեր պահանջած բացատրութիւնները, բայց այդ տեղ էլ փոխանակ ուղղակի մեզ ցոյց տալու իրենց լինած վարձատրալ գրպանները, նա մեզ ցոյց է տալիս կարգադիր մասնախմբի անդամներից երկուքին (պ. պ. Կ. Պոգոսեանին և Պոգոս Մհաթի. Սարգսեանին) որոնք իրենց բերանով խոստովանեցին որ այդ երեկոյ բուֆետը գողացեցաւ: Այդ պարտենքից մէկը թէհրանից բացակայ է և միւսը պ. Կ. Պոգոսեանը ինքը հրապարակաւ կպատասխանի այդ ամբաստանութեանը: Մի փոքրեւէն ենթադրելի որ այդ մատնացոյց եղած պարտենքը, իսկապէս աւել են այդ

պիսի մի խօսք, բայց Ջաւղի խմբագրութիւնը ինչ երաշխաւորութեամբ, ինչ փաստով է այդ խօսքը տպագրում որպէս ճշմարտութիւն:

Ջաւղի խմբագրութիւնը վերջացնում է իւր յօդուածը ասելով որ ինչու համար էր պէտք այդչափ նեղութիւն կրել և ժամանակ կորցնել լոկ 598 դ. 14 կէս 2. մի գումարի համար: Մենք հարցնում ենք այդ պարտենքից, որ մինչև այսօր թէհրանում արած երեկոյներից ո՞ր մէկը կարողացել է 730 դ. (արդէն լարգելի ընթերցողը հեռաւոր Ջաւղի լինած 598 դ. 14 և կէս 2. կանխիկ դրամն էր առանց, ապառիկը հաշիւել) մի գումար արգելւիք տալ:

Մենք վերջացնում ենք մեր յօդուածը ասելով Ջաւղի խմբագրութեանը, որ մենք մինչև անգամ արժան չէինք համարել պատասխանելու իրենց ցնդարանութիւններին, եթէ այդպէս անելով չվախենայինք թիւրիմացութիւնների տեղիք տալուց և եթէ մարդիկ թէհրանից դուրս նորանց ճանաչէին իրենց իսկական գոյներով, ինչպէս որ ճանաչում են թէհրանում. բայց մենք վստահ ենք որ իրենց այդ «քննադատութիւնը» «տրամաբանութիւնները» նորանց մինչև այժմ շատ լաւ ծանօթացրած կը լինին ընթերցող հասարակութեանը:

Կարգադիր Մասնախումբ.

Արմենակ Յարութիւնեանց  
Ռ. Թադեոսեանց  
Յովսէփ Բաբայեանց  
Մ. Զ. Միլզայեանց  
Կ. Պոգոսեանց

### ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Ն. Կ. Վեհափառութիւն. ՋԱՆՆԱՅԻՐ  
Իւր թագաւորութեան ինստիտուտ յօդուածի պաշտօնական արարողութիւնները սկսելուց առաջ՝ կամենում է Ջահգաղ-Արգիւլ-Աղիմ նահատակի սրբազան շիրմի վրայ աղօթել: Ուրբաթ առաւօտ ժամը ութի մօտերը արդէն մեկնում է Ջահգաղ-Արգիւլ-Աղիմ, կէսօրից առաջ ճաշի հրաւերը չընդունելով գնում է աղօթատեղին, սովորութեան համեմատ սկսում են մարդկանց դուրս անել, բայց գլխաւոր Վեհապետը հրամայում է, որ արգելք չը դառնան և չը նեղացնեն ժողովրդին և սկսում է ինքն էլ աղօթել, առաջին արարողութիւնը տաւորելով ծնրադրում է և ահա այդ միևնույն բողոքին անգամ չարագործի ուղղութիւնը գնդակը անցնում է հանգուցեալ Վեհափառի ձախ կողմի հինգերորդ և վեցերորդ կողմի միջից սրտի տակը քերելով թիկունքից դուրս է գալիս, թագաւոր չալը արդէն ընկնում է անշնչացած. Ն. Մեծ. Պարքոսը իսկոյն կառքի մէջ առնելով, զօրքով շրջապատած, վերադարձնում է քաղաք: Իսկոյն հրաւիրւում են բժիշկներ, վերաբուժներ սակայն ի գուր, երեկոյ ժամը 3-ին Պարսկաստանը կորցնում է իւր այնքան սիրելի Վեհապետին:

Ջարաթ

Այսօր քաղաքի մէջ տարածեց, որ Ն. Կ. Մեծութիւնը վերաւորւած է ոտքից սակայն մահացու չէ. այս բուսական լուրը նոր եւանգ, նոր կեդրանութիւն տաւ ինքն ժողովրդին, որ

բնագործմբ շատ լաւ էր զգում, թէ ինչ է կատարւում իւր վիճակի հետ:

Կիւրակէ

Այսօր Ջահի մեծիւղում պաշտօնապէս հրատարակեց նահատակ Կայսեր մահւան բովը, ինչ զառնութիւն:

Ամսոյ 19-ին Դավրէժում գահ նստեց Ն. Մեծ. Մուգաֆրեղին Միլզո գահաժողանգը և կոչեցաւ Մուգաֆրեղին Ջահ:

Քաղաքը՝ ցաւալի բովը գուժելուց լետուր գտնւում է մի տեսակ մեռելաին անշնչութեան մէջ, կործեո, ոչ ոք ո՛րիւ չէ անում բերան բացելու անգամ և շնորհիւ Ն. Մեծ. Սաղազամի աշխուրջ հսկողութեան և արագ կարգադրութիւնների օրինակելի կարգադրութիւն և խաղաղութիւն է տիրում:

Նահատակ Կայսեր վրայ տարճանակ արձակող հրէշը կոչւում է Միլզա Բիգա, այդ արարածը Քիւրմանցի է և ուրանում է բաբի աղանդին պատկանել, կամենում է հաւատացնել, որ իր կուսակցութիւնը բողոքացած է հազիւ 20 հոգուց և իր քայլի շարժումից համարում է տիրող օրէնքի անարդարութիւնը. այս էլ պէտք է ասած, որ ինչ ինչ լանցանքների համար՝ մի քանի տարի շարունակ բանտարկւած է եղել: Ըստեր կարծում են, որ սէրդ Զէմալէգ-զինի 1) հետևողներից է:

Ն. Վեհ. Մուգաֆրեղին Ջահը, իր կողմից առ ժամանակեայ փոխանորդ է կարգել Ն. Մեծ. Եպարքոսին և տեղ է լիազօր. իշխանութիւն մինչև իւր Մեծութեան համեմբ:

Ինչպէս լսում ենք, երկրի ընդհանուր խաղաղութիւնը, առիթ է տւել Վեհ. Մուգաֆրեղին Ջահին աւելի հանգստութեամբ դիմելու իւր գահը հաւատացնում են, որ տասը կամ տասն և հինգ օրից լետուր հազիւ բողոք ունենայ Մուլաթաղաքս ողջունելու իւր նոր Վեհապետի հանգիստը գալուստը

Ամսոյ 23-ին Մայրաքաղաքիս հայ հասարակութեան կողմից փոխանորդ հայրը ցաւակցական մի հնուագիր է ուղղել Ն. Կ. Վեհ. Մուգաֆրեղին Ջահին ինչպէս Ն. Մեծ. Սաղազամից հեռակաւ պատասխանն է ստացել:

Նորին Դերապառութիւն Սահակ Վարդապետ Ալվատեան Առաջնորդական փոխանորդ Պարսկաստանի և Հնդկաստանի հայր:

Յարգելի Բարեկամ. Ձեր հեռագրած ողբասգիւրը առ նորին Կայսերական Վեհափառութեան ՋԱՆՆԱՅԻՐ (Ատուած պահպանէ նորա թագաւորութիւնը) նորա բարձր նկատողութեան արժանացաւ: Նորին Վեհափառութիւնը ինչ հրամայեց որ նորա կայսերական բարձր գահունակու-

1) Սէլա Զէմալէգը ինչ պիտի գտնուի է Պոլսում, նա «միացեալ մահմեդականութիւն» քարոզողների բանակին է պատկանում:

Թիւրք, Ձեր արտայայտած անկեղծ զգացումների մասին, լայնեմ Ձեր Դերապառութեան և հայ ազգին: Ահնեք և որ հայ ազգի հանգստութեան և բարօրութեան համար, նորին Կայսերական Վեհափառութեան կողմից ամեն հարկ եղած հազարութիւնը թգործ պիտի գրւի: 21 Քիւլադ 1313.

ՍԱԳՐԱԶԱՄ

Ամսոյ 23-ին հանդիսաւոր ցոյց կատարեց հանգուցեայ նահապետ Կայսեր առժամանակեայ շիրմի վրայ: Պաշտօնական մարմինը ներկայ էր, տեսարանը խիստ մորմոքիչ ազդեցութիւն էր անում:

Թէհրանի հայ երիտասարդութիւնը նա մի զգացած հնուագիր է պատրաստում Ն. Վեհ. Շահինշահին ողջնությունը պատճէնը միս համարով կրտանք: Վեհ Կայսեր մահան առիթը հայոց ողջոցները փակ են:

Թերթիս 13-րդ թւի մէջ հրատարակած «տիկրոց յանձնախումբը եւ հասարակութիւնը» վերնագրով յօդուածը կարծել է տաւ շատերին, որ այդ յօդուածը ներշնչւած է եղել սովորաց յանձնախումբից: Զը գիտնեք ինչն է տեղի տւել այդ կարծիքին, բայց խղճազորութիւնը յայտարարում է, որ այդ յօդուածը ոչ մի կապ չունի յանձնախումբի հետ, այլ լոկ խմբագրութեան կողմից գրւած է:

### Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Փետրերորդ 29. ապրիլ Ն. Չարեվիչի առողջութեան խանգարումը բաւական մամտութեւ առաջ բերել:

Հունիս 30-ին ապրիլ Ն. Փրիմորդ Լիգի» երկկան ժողովում Սոխգրիւնի խօսելով պաշտպանեց Դոնգրայի արշաւանքը, և առեց թէ անհրաժեշտէր այդ անկ ճգիպատի սահմանները ապահովելու համար, որպէս զի Բրիտանեան կարողանար հարկը պահանջած ժամանակին, Եգիպտոսը յանձնել ինչպէս ստացել:

### ԴՐԱՄԱԿԱՆ ԱՐԺԷՔ

|                      |          |
|----------------------|----------|
| Հին ռուսաց ոսկի      | 41 դ. 50 |
| Նոր ,, ,,            | 40 դ. 50 |
| Պարսից թումանի ոսկի  | 18 դ. 90 |
| ,, հինգ դրանանոց     | 9 դ. 90  |
| Տաճկաց ոսկի          | 46 դ. 50 |
| Ռուսաց բուբլի        | 5 դ. 40  |
| Սև փողի ստոֆն 1 թու- |          |
| ման սպիտակի.         | 2 դ. 50  |

### ՓՈՒՍԱՆԱԳՐՈՐԻ ԱՐԺԷՔՆԵՐ

Հունիսի վրայ 3 ամսով թւականից, 1 լիրա 49 50  
Տաճկական լիրա Պոլսոյ վրայ 1 ամսով 45 դ. 75  
Ռուսական բուբլին Ռուսիոյ վրայ 190 կոպեկն 10 դրան,

### ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

Աստղ-Արեւելեան Ընկերութիւն ԱՐՏՈՆԱՏԷՐ

Մակար Կ. Մակարեանց

Թէհրան՝ Զաւա-հայ Տպարան